

ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Հայ ժողովրդի պատմության քառուղիներում գիրքն ու գրատպությունը դարձել են ազգավրկիչ օղակներ՝ սերունդներին փոխանցելով պատմական փաստերն ու գիտական ձեռքբերումները: Հայ տպագրության պատմությունն անցել է զարգացման տարբեր փուլերով՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին կատարելագործելու տպագրության արվեստը:

2017 թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի ազգային գրադարանի հյուրընկալ հարկի ներքո բացվեց Գրատպության թանգարանը՝ տպագրության պատմությունն արտացոլելով *Գրի ակունքները, Հայոց այբուբենը, Հայ գրատպության առաջնեկները, Հայկական գրատպության սիյուռքը, Գրահրատարակչություն, Գրի հավերժությունը* սրահներում: Գրատպության թանգարանը բացվեց Հայաստանի ազգային գրադարանում, քանի որ այն համարվում է հայերեն տպագիր նյութի ամենամեծ պահոցը: Թանգարանի տարբեր սրահներում առանձնահատուկ տեղ հատկացվեց հայ տպագրության գոհարների ցուցադրությանը. հավաքածուն ընդգրկում է գրատպության պատմությունը ներկայացնող ցուցանմուշներ՝ հնատիպ գրքեր, տպագրական գործիքներ, կլիշեներ, տպագրական մեքենաներ և այլն: Գրատպության թանգարանը հազեցած է նոր տեխնոլոգիաներով, ինչը ստեղծում է ոչ ֆորմալ կրթության ինտերակտիվ միջավայր:

Թանգարանը կոչված է ծառայելու հանրությանն ու նրա զարգացմանը: Այն ցուցադրում է մարդկության ժառանգությունը՝ կրթության, ուսումնասիրության և ժամանցի կազմակերպման նպատակներով:

ԹԱՆԳԱՐԱՆԸ ԲԱՑ Է

Երեքշաբթի – կիրակի 10:00 - 16:00

Հանգստյան օր՝ երկուշաբթի

ՀՀ, 0009, Երևան, Տերյան 72

Teryan 72, Yerevan, Armenia 0009

museum.printing@gmail.com

info@nla.am

+37460623514(5)